բութեանս, որ ժառանգաւորաց դպրոցի պահպանութեան եւ այլ հարկաւոր պիտոյից համար ի գործ դնէ 1873 տարւոյս մէջ հիմնական եւ պատրաստական դրամագլխոց եւ անդամոց բաժանորդագնոց եւ կամաւոր նուիրանաց չորս մասանց երեք մասն համաձայն կանոնադրութեան Ընկերութեան: բ. Յանձնաժողովոյն յօրինած դպրոցի կանոնադրութիւնը յանձնել Խորհրդարանին առաջի առնել ի հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի: գ. Յայտնել շնորհակալութիւն պատուելի անձանց պարոնայց Դասպարայ Փոփովի, Թորոսի Խոնայեանց, տիկնոջ Խոնայեանց, Գէորգայ Խաթրանեան եւ Մինասայ Պալապանեան, եւ դ. Ընկերութեանս 1872 ամի հաշիւը հանդերձ այս կարգաւորութեամբ տալ տպել վասն ընդհանուր տեղեկութեան:

Ի վերայ նախագաղափարին ստորագրեալ են ներկայ անդամք Ընկերութեանս:

Պատճէնս այսորիկ ընդ նախագաղափարացն համեմատ են, ի ստուգութիւն որոյ վկայէ Խորհրդարանս ստորագրութեամբք անդամոց:

Անդամք Խորհրդարանի

Ն-ի-ք-ա-հ Եղէ-ն Պ-ա-ղ-ա-ն-ց
Խ-ա-ր-ա-ր Ա-ք-ա-հ-ա-ն-ա-յ Զ-ա-ք-ի-ա-ն-ց
Խ-ա-ր-ա-ր Ա-ք-ա-ն-ա-ն-ա-ն-ց
Մ-ի-ն-ա-ս Պ-ա-ղ-ա-պ-ա-ն-ա-ն-ց
Մ-ա-ր-ա-ր Ա-ղ-ա-ն-ա-ն
Պ-ա-ր-ո-ն Պ-ա-ր-ի-ա-ն.

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՅ ՀԱՅՈՑ ՕՐԻՈՐԴԱՑ ՍԱՀԱԿԱՆՈՅՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ:

. . . Խմբագրութիւնն Արարատայ իւր ներկայ շրջանի Մարտ ամսաթերթին մէջ հրատարակեց արդէն ի լուր ազգայնոց Աղէքսանդրապօլոյ մէջ բացուելի Սահականոյշ անուամբ Օրիորդաց Ծխական դպրոցի մասին, հիմայ կփութամ մի քանի խօսք ասել նորա բացման հանդիսակատարութեան վերայ:

Այսօր ճաշու Ս. Պատարագից յետոյ տեղւոյս Սուրբ Նշան Եկեղեցւոյ մէջ Արժ. Յաջորդն մեր խօսեցաւ մի գեղեցիկ համառօտ ատենաբանութիւն, որով միաբանութեան օգտակարութիւնն ցոյց տալով՝ կհրաւիրէր զժողովուրդն միաբան սրտիւ աշխատել միշտ մտաւոր զարգացման միջոցների վերայ. Սուրբ սեղանոյն բոլորով շարուած էին կարգաւ տեղւոյս Ղահրամանեան Օրիորդական դպրոցի աշակերտուհիք, և կերգէին եկեղեցական երգերն, ապա և սոցա վերայ յաւելան յիսունի չափ մատաղատի Հայ աղջկունք, որոնք ընտրուած էին արդէն քաղաքիս աղքատիկ գերդաստաններից Սահականոյշ Նոր դպրոցի մէջ դաստիարակուելու նպատակաւ. Երբ ժամերգութիւնն աւարտեցաւ, բոլոր աշակերտուհիք իւրեանց ուսուցիչների, ուսուցչուհիների և հոգևորական դասու հետ դիմեցին դէպ ի Նոր դպրոցն աղջկանց, ընդ նոսին և քաղաքացի Պարոններ և Տիկիններ. Արժ. Յաջորդն երբ մաղթանքն և օրհնութիւնն վերջացրուց՝ Ղահրամանեան Օրիորդական Դպրոցի աշակերտուհիք երգեցին գեղեցկապէս «Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր», ազգային երգն. ապա Հոգևոր դպրոցի ուսուցիչ Պ. Մկրտիչ Արաբաջեանցն կարդաց մի գեղեցիկ ճառ, որով կբացատրէր դաստիարակութեան նշանակութիւնն. հուսկ յետոյ Հոգևոր դպրոցի Տեսուչ Պ. Բէկ-Նազարեանցն ընթերցաւ յարգելի Պարոնների և Տիկիններ անուանքն, որոնք նիւթապէս նպաստամատոյց են եղած Նոր դպրոցին. այդ նուիրատուութեանց գումարն այժմ կհասնի մօտ 500 բուրլու. ի շարս նուիրատուաց ուշադրութեան արժանի Պ. Ղազար Աղայեանց Ղահրամանեան Օրիորդաց դպրոցի Տեսուչն Ս. Սահականոյշ դպրոցին մէջ բաց ի ձրի դասախօսութիւն յանձն առնելուց՝ կնուիրէ ի նպաստ նոյն դպրոցին գրքեր իւր աշխատութիւն և թարգմանութիւն 100 բուրլի արժողութեամբ. շնորհակալութիւն հրապարակաւ Պարոնին, որ գործով ազգային մանկուցոյն յառաջադիմութեան զովելի օրինակ կներկայանայ. Որբանոցամ անդամներն նոյնպէս նուիրած են 50 բուրլոյ արժողութեամբ գրքեր, քաղաքիս աղքատանոցի Հոգաբարձութիւնն ևս խոստացել է տասնեւերկու որդեգրուհի ունենալ այդ դպրոցի մէջ. Մարդն բնութեան ամենաղնիւ ստեղծուածն և քիչոյշ ծաղիկն գոլով՝ սրքան

արժանաւոր է Նորան էական կոչում՝ և նշանակութիւն, որքան սեպուհ և բարձր են Նորա պարտականութիւնքն շրջահայեաց Նկատմամբ, և քանի քանի սրբազան խորհուրդներ և նշանաւոր կէտեր կշրջապատեն Նորա առօրեայ կենաց ընդարձակ ասպարէզը. երբ մարդ մանկութեան փափուկ հասակի մէջ իւր առաջին քայլը կդրդէ աշխարհի վերայ, Նորա մէջ ամենայն մի հոգեկան և բնական ընդունակութիւնք և յատկութիւնք կգտնուին արդէն իբրև երկրագործի նոր յերկիր ձգած սերմեր, Նոքա զարգացած չեն, սկիզբն են միայն կարօտ մեծամեծ հոգատարութեանց և խնամոց, որպէս զի կարող լինէին առողջ կեանք ունենալ և անվնաս կերպիւ բնութեան սուրբ պարգևների իսկ նպատակն իրագործել։ Դաստիարակութիւնն միայն պիտի վճռէ այս, դաստիարակութիւնն միայն պիտի զօրէ իւր կենսագործ արևութափանցիկ ճաճանչով հասուցանել գոյնս իւրեանց էական պայմանին և բնութեան վերջ նպատակին։ Դաստիարակութիւն պիտի սկսի օրօրոցի միջից, մարմնական կազմուածոյ զարգացման հետ պիտի զարգանան և հոգեկան ընդունակութիւնք։ Մի մանուկ՝ շնայելով թէ որպիսի վիճակի ազդեցութեանց տակ է սկսել իւր մատաղիկ կեանքի առաջին շրջանն, ամբողջ մարդկութեանն մի մասն է արդէն նա, և ի՞նչով արդեօք պիտի իրագործի Նորա էական բաղկացութիւնն, եթէ ոչ դաստիարակութեամբ միայն։ Ամենայն մի երեխայի ընկրկընակոն կրթութիւնն սկսուելու է ընտանիքի մէջ, օրօրոցը և մայրական գիրկը բարոյական վարժարան լինելու են Նորա հոգւոյ և մտաց համար, և ահա բնութեան խորհրդաւոր սկիզբն դէպ ի իրական վախճան և նպատակ հասանելու ուղիղ պողոտայ կգտնի ամրացած իւր դողդոջուն ոտքերի տակ, և ահա մի մարդ ևս մարդկութեան օգտարեր և ամենակարևոր պայմաններով կսկսի զարգանալ և մարդկութեան խորհրդաւոր բուրաստանին մէջ հոտաւէտ մի ծաղիկ դառնալու յոյս ընծայել։ Մի որ և իցէ ժողովրդի մէջ ընտանեկան դաստիարակութիւն մտցնելու համար, նախ և յառաջ հարկաւոր է ուսեալ մայրեր պատրաստել. դարերի և ժամանակների մէջ եղած փորձերն հաւաստի արած են արդէն այդ քնքշագեղի կրթութեան ամենակարևորութիւն մարդկութեան ընդհանուր յառաջադիմութեան և բարօրութեան Նկատմամբ։ Այսօր Աղէքսանդրապոլու համար եկեղեցական սրբազան աւուր հանդէսն մի խորհրդաւոր ծնունդ ստեղծեց, մի սուրբ տաճար հիմնեց, ուր աղքատիկ Հայ աղջկունք պիտի զարգանան բարոյապէս և մտաւորապէս, ուր պիտի յառաջէ նոցա նշանակութիւնն քաղաքական և հասարակական կեանքի համար, նոցա անձին օգուտներն ազգութեան համար։ Բարձր է դաստիարակութեան նշանակութիւնն, որով միայն ամենայն մի բանական ստեղծուած կստեղծագործի մարդ իսկական յօգուտ մարդկութեան։ — Սահմանոյշ աղքատիկ օրիորդների Նոր դպրոցը մեծ ուրախութիւն ներգործեց բոլորեցունցս վերայ և անտարակոյս եմ, որ պիտի ուրախանայ ամենայն մի բարեմիտ ազգային. ուրեմն մաղթենք միաբերան, Հոգին Սուրբ Աստուած, որ այսօր ի Վերնատուն իջնելով առաքելոց տխուր սրտերուն վերայ իւր սփոփիչ շնորհաց լոյսը կը ծաւալէ՝ պաշտպան լինի այս Նորածին դպրոցին, իւր շնորհքը սփռէ այն տեղ և Նորան յարատև առողջ կեանք պարգևէ, որպէս զի մատաղահասակ օրիորդաց դաստիարակութիւնն ընթանայ այն տեղ ուղիղ և անմոլար ընթացքով՝ բարոյականութեան սուրբ դրօշակը իւր դլխոյ վերայ ամրացած, որպէս զի Նոցա մտաւոր ուղղութիւնն սկսի անսայթաք քայլերով յառաջել ուսումնական հանդէսին մէջ, և որպէս զի Նոքա բարեկիրթ Մայրեր լինելով ժամանակին պատրաստեն պիտանի Հայ մանուկներ, ազգութեան սուրբ կրօնի և անոյշ լեզուի անձնանուէր պաշտպաններ, Հայութեան և հետևաբար ընդհանուր մարդկութեան կազմուածքին օգտաւէտ և գործունեայ առողջ անդամներ։ Կ՚ուսամ՝, որ սիրելի համաքաղաքացիքս անդադար պիտի աշխատեն դպրոցի դիկը անվնաս և ուղղագնաց պահպանելու, ամենայն մի այդպիսի Նոր սկզբանց դէմ՝ եկող ալիքներու կատաղութեանց դէմ՝, և ձեռք ձեռքի տուած երկսեռ զպրոցաց յարգոյ ուսուցիչների հետ, որոնք առանց ակնկալութեան դասախօսութեանց ծանրութիւնը ընդունած են իբրև մի քաղցր և սրբազան պարտականութիւն իւրեանց ուսի վերայ,

նպաստաւոր լինին ընդհանուր օգտին։ (Շնորհակալութիւն յառաջագէս Տիկին Զապուհի Գիւլամիանցին, որ չնայելով իւր կանացի ուժոյն տկարութեան՝ յանձն է առել ըստ կարելւոյն օգնել աղջկանց յառաջադիմութեան այդ դպրոցին մէջ առանց մի վարձ ընդունելու)։ — Սահակեանոյ նոր բացուած օրիորդաց ծխական դպրոցին յառաջադիմութիւն և բարեկէս յաջողութիւն մաղթելով ի բոլոր սրտէ, խնդրեմ ի բարեջան Խմբագրութենէդ Արարատայ մի անկիւնի մէջ տեղի շնորհել այս յօդուածիս յուրախութիւն և յոգեւորութիւն բարեմիտ ազգայնոց։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵՂԵԱՆՑ.

ի 20 Մայիսի 1875 ամի

Ալէքսանդրապօլ։

ԳՐԻԳՈՐ ՏԷՐ-ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ՆՈՒԷՐ ԵՒ ԽՈՍՏՈՒՄՆ.

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Թող նորուի ինձ ամսագրոյդ Արգոյ ընթերցող հասարակութեան ազնիւ ուշադրութիւնը դարձնել մի ուրախալի և ուշադրութեան արժանի համառօտ տեղեկութեամբ, և անտարակոյս եմ որ ազգասէր խմբագրութիւնդ կը հաճի զետեղել այս Աստուածահաճոյ գործը իւր պատուական ամսագրոյ էջերի մի անկիւնում յուրախութիւն ամէն եկեղեցասէր և հայրենասէր սրտերի։

Տեղւոյս հասարակութիւնը տեսնելով այժման եկեղեցւոյ փոքրութիւնը և նորա գաւթում գտնուած ուսումնարանի անյարմարութիւնը՝ մտադրեցաւ կառուցանել և մի այլ եկեղեցի՝ առաջինի հետ, որի պարիսպը լինի ընդարձակ և ունենայ յարմարութիւն ուսումնարանի։ Հասարակութեան այս բարի մտադրութիւնը ի գլուխ բերել ցանկալով՝ մեր քաղաքացի մեծապատիւ մահտեսի Գրիգոր աղայն Տէր Կիրակոսեան՝ բարեպաշտական հոգւով յանձն առաւ այդ բարեպատակ շինութեան բոլոր ծախսը անել, իւր սեփականութենից կառուցանել մի քարուկրեայ հոյակապ փառաւոր եկեղեցի, որի համար այժմէն իսկ առձեռն պատրաստ դրամ 6000 րուբլի յանձնում է իւրենից նշանակած երեք բարեյոյս անձանց, որպէս զի երբ քաղաքական իշխանութենից տեղը տրուի, նոքա սկսին շինութիւնը, յանջնջելի յիշատակ իւր ի Տէր հանգուցեալ ծնողի — Տէր Կիրակոս քահանայի և իւր աստուածասէր և բարեսէր հոգւոյ, և Թերևս յուսալի է նորա մեծագործ հոգւոյ զկնի շինութեան եկեղեցւոյն՝ նպաստել և ուսումնարանի շինութեան, իսկ այժման տղայոց ուսումնարանը թողուլ օրիորդաց համար, որին մեր հասարակութիւնը ունի զգալի կարօտութիւն, վասն զի այժմ օրիորդ.ք վարձած տան մէջ են ուսանում։ Տէր — Կիրակոսեանի այս գովելի բարեպաշտական գործը անմահացնում է իւր բարեգործ գեղեցիկ անունը մեր ազգի բարերարաց շարքում՝ յօրինակ բարեաց հանդիսանալով Ազգիս մեծապատիւ հարստաց համար։

ՈՍԿԵՓԱՆՆՈՍ ԱՒԱԳԵՐԱՀԱՆԱՅ ԴԷՄԻՐՃՕՂԼԵԱՆՑ.

ի 25 Ն Մայիսի 1875 ամի

յԱխալքալակ։

ԲԱՆ ՀԱԿԻՐՃ ԱՌ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐՆ։

Այլ եւ այլ կիրք շարժեցան հոգւոյս մէջ, երբ ընթերցայ Արարատ կրօնաւոր ամսատետրակի առաջին համարի 1875 ամի, յէջն 14. մեր ազգի համար նախատագիր այս խօսքերն թէ «Հայք գողքիր խաբեբայք են առհասարակ» եւ նորա դէմ 52 Թուանշանաւ բերած բացատրութիւն, որ կսկանի այսպէս «Թէ ուստի արդեօք առեալ յարգոյ հեղինակն՝ խաբեբայս անուանէ զհայս» որ մինչեւ ի վերջն արժանի է ոսկեզօծ տառիւք դրոշմել ի տախտակս մտաց, եւ իւրաքանչիւր հայ պարտաւոր է զայն անգիր սերտել, եւ յամենայն ժամ կրկնել եւ յիշել, որովհետեւ առէպ կենանին համեյեալ մերոյ համազգեաց այսպիսի անտալի հատարարանութեանց՝ թէ «այս ինչ որ ջանայր խաբել զիս, խոկ այս ինչ որն հայ էր», եւ մակաբերել զայսպիսի նողկալի եզրակացութիւն, թէ «ապա ուրեմն Հայք խաբեբայք են» եւյն:

Լաւ էր թէ միայն խաբեբայ անուանէին, եւ ոչ բան զայն եւս վատթար կոչմունս մեր ճակատի վե-